Մայրենիի (ընթերցանության) օլիմպիադա
Մարզային փուլ, 6-րդ դասարան
2025-2026
Տևողությունը՝ 120 րոպե

ԲԱՐԻ ՁԿՆՈՐՍԸ

Ըստ ճապոնական հեքիաթի

- **Միրելի՛ աշակերտ, ուշադիր կարդա՛ տեքստը։**

Մի ժամանակ Ուրասիմա Տարո անունով մի ձկնորս էր ապրում: Նա շատ բարի ու քնքուշ սիրտ ուներ: Այս Ուրասիմա Տարոն մի օր քայլում էր ծովափով և տեսնում է մի խումբ երեխաների, որոնք աղմկում էին: Նրանք բռնել էին մի մեծ կրիա և տանջում էին:

-Մի՛ տանջեք կրիային, մեղք է: Դրան ի՛նձ տվեք:

Տարոն փրկում է կրիային և ազատ արձակում:

Անցնում են օրեր: Ինչպես միշտ, այդ օրն էլ Տարոն նստում է նավակ, բաց ծով է դուրս գալիս՝ ձուկ որսալու:

Հանկարծ մեկը ձայն է տալիս.

-Ուրասի՛մա Տարո, բարի՛ մարդ:

Ձկնորսը շրջվում է և տեսնում, որ ծովի ջրերի վրա տատանվում է մի մեծ կրիա: Նա գալիս է դեպի նավակը, գլուխ տալիս ձկնորսին և ասում.

- Ես այն կրիան եմ, որին Դուք ազատեցիք: Շատ շնորհակալ եմ Ձեզնից: Ի նշան երախտագիտության՝ ես Ձեզ կուղեկցեմ ծովային վիշապի պալատը, ուր Դուք կապրեք ուրախ, անհոգ և անմահություն ձեռք կբերեք:

Կրիան նստեցնում է Ուրասիմային իր մեջքին ու բերում ծովային վիշապի դղյակը: Պալատը շլացուցիչ էր՝ իր թանկարժեք քարերով ու երփնավառ խեցիներով: Արքայադուստրն ու ձկները դիմավորում են Ուրասիմային:

- Զգացե՛ք Ձեզ ինչպես Ձեր տանը,- ասում է արքայադուստրը:

Հետո ձկնորսին ընտիր խորտիկներ և օշարակ են տալիս: Հյուրասիրությանը հետևում է համերգ: Պերկեսները, տափակաձկներն ու ութոտնուկները զվարճալի պար են բռնում ձկնորսի շուրջը:

Օրերը թռչում են իրար հետևից: Ձկնորսը չի էլ նկատում, թե ինչպես է անցնում ժամանակը:

Բայց շուտով նա կարոտում է ցամաքին, իրենց գյուղին և մարդկանց: Արդեն վաղուց նա մահկանացու չէր տեսել: Նա սկսում է ավելի ու ավելի հաճախ մտածել իրենց տան, գյուղի մասին:

Տեսնելով նրա տրտմությունը՝ արքայադուստրը նորանոր զվարճալիքներ էր հորինում, որ ձկնորսին պահի իր պերճ դղյակում:

Բայց մի օր ձկնորսն արցունքն աչքին խնդրում է իրեն տուն տանել:

-Այդ դեպքում,— ասում է արքայադուստրը,- ես նվիրում եմ Ձեզ այս արկղիկը: Բայց հիշեցե՛ք՝ ինչ էլ պատահի, սա չբացեք:

Ուրասիմա Տարոն նորից նստում է կրիայի մեջքին, և կրիան նրան ափ է հանում: Ձկնորսը գնում է դեպի իր գյուղը: Բայց գյուղն անճանաչելի էր դարձել: Չկար այն տունը, ուր մի ժամանակ ինքն էր ապրել: Չկային իր ճանաչած մարդիկ: Բոլորը զարմանքով նայում էին օտարականին, նրա հնաոճ հագուստին: Լսում էին նրա խոսքը և ավելի զարմանում: Ինչ-որ ուրիշ կերպ և այլ բառերով էր խոսում այս անծանոթը: Խեղճ ձկնորսն այստեղ՝ մարդկանց մեջ, իրեն ավելի մենակ ու լքված էր զգում, քան ծովի հատակին:

Մի օր էլ մոռանում է արքայադստեր պատվերը և բացում է արկղիկը: Արկղիկից սպիտակ ծուխ է ելնում: Հենց որ ծուխը դիպչում է Ուրասիմայի մազերին ու մորուքին, դրանք ձյան պես սպիտակում են: Ուրասիմա Տարոն ջահել տղամարդուց վերածվում է կնճռոտ ծերունու: Նա կորցնում է անմահությունը:

Իսկ հիմա կատարի՛ր առաջադրանքները: Քեզ մաղթում ենք առավելագույն ուշադրություն և բարձր տրամադրություն:

1. **Ի նշան երախտագիտության՝ ի՞նչ արեց կրիան։ Ընտրի՛ր ճիշտ պատասխանը։** **1 մ.**
   1) Ուրասիմային նավակով տարավ ծովային վիշապի դղյակը։
   2) Ձկնորսին ընտիր խորտիկներ և օշարակ հյուրասիրեց։
   3) Հրամայեց, որ արքայադուստրն ու ձկները դիմավորեն Ուրասիմային։
   4) Ձկնորսին ուղեկցեց ծովային վիշապի պալատը՝ անմահություն ձեռք բերելու։
   5) Տարոյին կախարդական արկղիկ նվիրեց։

2. **Տեքստից դո՛ւրս գրիր այն նախադասությունը, որն ապացուցում է, որ Ուրասիմա Տարոն բարի էր։** **1 մ.**

   _____

3. **Տեքստից դո՛ւրս գրիր 2 բառ, որոնցով բնութագրված է Ուրասիմայի սիրտը։** **2 մ.**

   _____ _____

4. Տեքստից դո՛ւրս գրիր ***ապարանք*** բառի երկու հոմանիշ։ **2 մ.**

   _____ _____

5. **Կարո՞ղ ես տեքստում գտնել և դուրս գրել 3 բառ, որոնք ծովային կենդանիներ են մատնանշում։** **3 մ.**

   _____ _____ _____

6. **Քո կարծիքով՝ ինչի՞ց սկսվեցին Ուրասիմայի արկածները։ Խոսքդ շարադրի՛ր քո բառերով։** **3 մ.**

   _____
   _____
   _____

7. «Ինչպես միշտ, այդ օրն էլ Տարոն նստում է նավակ, ***բաց ծով է դուրս գալիս***՝ ձուկ որսալու»։ **3 մ.**
   Ընդգծված նախադասության իմաստը գրի՛ր այնպես, ինչպես դու ես հասկանում։

   _____
   _____
   _____

8. **Ըստ քեզ՝ ձկնորսը երջանի՞կ, թե՞ դժբախտ էր ծովային վիշապի պալատում։** **5 մ.**
   Ասելիքդ հիմնավորի՛ր 4-5 նախադասությամբ։

   _____
   _____
   _____
   _____
   _____

9. **Օգտվելով տեքստի բառապաշարից՝ 4-5 նախադասությամբ նկարագրի՛ր Ուրասիմայի հոգեվիճակը իր գյուղը վերադառնալուց անմիջապես հետո։** **5 մ.**

   _____
   _____
   _____
   _____
   _____

10. Մի քանի նախադասությամբ բնութագրի՛ր այն երեխաներին, որոնք տանջում էին կրիային: 5 մ.
Քո վերաբերմո՛ւնքն արտահայտիր նրանց արարքի նկատմամբ:

_____
_____
_____
_____
_____

11. Ի՞նչ ես կարծում, Ուրասիման կբացե՞ր արկղը, եթե իմանար, որ զրկվելու է անմահությունից: 5 մ.
Տեսակետդ հիմնավորի՛ր 4-5 նախադասությամբ:

_____
_____
_____
_____
_____

12. Քո կարծիքով՝ ճի՞շտ կլիներ, որ մարդիկ անմահ լինեին: Կարծիքդ հիմնավորի՛ր 5 մ.
4-5 նախադասությամբ:

_____
_____
_____
_____
_____

13. Փոխի՛ր պատմության ավարտը և նկարագրի՛ր, թե ինչ կլիներ, եթե Ուրասիմա Տարոն 8 մ.
երբեք էլ չբացեր արկղը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

14. Պատմության համար նոր վերնագի՛ր հորինիր: 2 մ.

_____

Ընդամենը՝ 50 միավոր:

Ուշադրություն

- Տեքստից բառացի արտագրված նախադասությունների համար միավոր չի տրվում:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան